ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

15 մարտի 2024թ. *ք. Երևան*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ ՄԽ-Ո-01

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 10.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և նույն հոդվածի 2-րդ մասը և այն, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի երկու թափուր պաշտոններում թեկնածուների ընտրության մրցույթին մասնակցելու հավակնություն է ներկայացրել մեկ հավակնորդ՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մրցութային խորհրդի կողմից 23.02.2024թ. հայտարարված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների պաշտոններում թեկնածուների ընտրության մրցույթը համարել չկայացած:
2. Հայտարարել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների պաշտոններում թեկնածուների ընտրության նոր մրցույթ:
3. Նոր մրցույթի հայտարարությունը, Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով, հրապարակել սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա ընթացքում:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՈՒՍՅԱԿ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍՈՆԱ ԽԱԼԱՖՅԱՆ

ՆԻՆԱ ՓԻՐՈՒՄՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ